

**Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղը
համալրելու մրցույթի անցկացման բանավոր փուլի
առարկայական հարցաշար
Երաժշտություն**

1. Ովքե՞ր են Հայաստանի և Արցախի օրհներգերի հեղինակները:
2. Որո՞նք են <<Երաժշտություն>> առարկայի ուսումնական գործունեության տեսակները:
3. Ի՞նչ նպատակ է հետապնդում « երաժշտություն» առարկայի ծրագիրը:
4. Ի՞նչ է երաժշտական խոսքը:
5. Որո՞նք են երաժշտության տեսակները:
6. Ինչպե՞ս է ուսուցանվում երգը:
7. Ի՞նչ նպատակ են հետապնդում երաժշտության ունկնդրումները:
8. Ինչպե՞ս պետք է սկսել լադային լսողության զարգացման աշխատանքները:
9. Ո՞րն է հնչյունաշարի գլխավոր հնչյունը:
10. Ո՞րն է երաժշտական խաղերի կազմակերպան նպատակը:
11. Քանի՞ ձայնաստիճան է ուսուցանվում 1-ին դասարանում:
12. Ո՞ր երգ-վարժությամբ է երեխաների լսողության մեջ ամրակայվում դո, ռե, մի ձայնաստիճանների հնչեղությունը:
13. Ի՞նչ ժողովրդական նվագարաններ գիտեք:
14. Ի՞նչպես կազմակերպել տարեվերջյան դասը:
15. Ի՞նչ է ռիթմը:
16. Ի՞նչ է պաուզան:
17. Ի՞նչ է տակտը:
18. Ինչպե՞ս են գրառում երաժշտական հնչյունների բարձրությունը:
19. Ի՞նչ է հնչերանգը:
20. Ինչ է մեղեդին:
21. Ի՞նչ է ցույց տալիս սո –ի կամ ջութակի բանալին:
22. Ինչպե՞ս են անվանում մանկական երգչային ձայնը :
23. Ի՞նչ է չափը:
24. Ի՞նչ է օպերան:

25. Ի՞նչ է բալետը:
26. Ո՞վ է «Ճուտիկը» մանկական օպերայի հեղինակը: Ինչի՞ մասին է այն:
27. Ո՞վ է «Գայանե» և «Սպարտակ» բալետների հեղինակը:
28. Երգչային ձայների ի՞նչ տեսակներ գիտեք:
29. Ի՞նչ է սիմֆոնիան և որտե՞ղ են այն կատարում:
30. Ի՞նչ է նոտան:
31. Ո՞ր օպերան է հանդիսանում հայ օպերային գրականության գլուխգործոցը:
32. Ո՞վ է Կոմիտասը: Ի՞նչ գիտեք նրա մասին:
33. Ո՞վ է Սայաթ-Նովան: Ի՞նչ գիտեք նրա մասին:
34. Ուսումնական ծրագրով ո՞ր սիմֆոնիկ հեքիաթն է ուսումնասիրվում: Ներկայացրեք այն:
35. Ովքե՞ր են «Քեզ համար, Հայաստան» , երգի հեղինակները:
36. Ի՞նչ առիթով է գրվել «Քեզ համար Հայաստան» երգը:
37. Ի՞նչ է գրել Հ. Թումանյանը խոսելով երաժշտության և գրականության (պոեզիայի) մասին:
38. Ի՞նչ է ռոմանսը:
39. Ո՞վ է համարվում հայկական ռոմանսի նախահայրը:
40. Ի՞նչ է կանտատը:
41. Տիգրան Չուլխաճյանի որ ստեղծագործություններն են ուսումնասիրվում 5-րդ դասարանում:
42. Ի՞նչ գիտեք «Անուշ» օպերայի մասին:
43. Ինչ գիտեք ժողովրդական պարերի մասին:
44. Ե՞րբ է գրվել «Մարտիկի երգը»: Ովքե՞ր են երգի հեղինակները:
45. Քանի՞ կերպար կա «Լեփո, լե ~, լե ~» երգում: Ովքե՞ր են հեղինակները:
46. Ի՞նչ է ինտերվալը:
47. Ի՞նչ գիտեք «Դավիթ Բեկ» օպերայի մասին:
48. Ի՞նչ է նշամակում դիրիժոր բառը: Ի՞նչ գործունեություն է իրականացնում:
49. Ի՞նչ է պատարագը: Ո՞ր հեղինակների մաշակումներն են նշանավոր բազմաձայնեցման օրինակներից:
50. Ի՞նչ գիտեք դասական երաժշտության մասին: